

ՀՀ Արագածոտնի մարզի տեղեկատվության և

հասարակայնության հետ կապերի բաժնի պետ [Մաթենիկ Ջորյանին](#)

Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողուհի

Ամալյա Կարապետյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ տկն. Ջորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ Քասախ գետի մաքրման աշխատանքների, աղտոտվածության աստիճանի եւ ներկայիս վիճակի մասին:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Ամալյա Կարապետյան

12.04.2015

Հարգելի Ամայա Կարապետյան

Քասախ գետի մաքրման աշխատանքների, աղտոտվածության աստիճանի եւ ներկայիս վիճակի մասին Ձեր հարցման կապակցությամբ տեղեկացնում ենք, որ Արագածոտնի մարզով Քասախ գետը հոսում է Ռյա-թագա, Միրաք, Ապարան, Վարդենիս, Եղիպատրուշ, Ջրամբար, Կարբի, Օհանավան, Աշտարակ, Օշական համայնքներով: Նշված համայնքապետարաններից Դուք կարող եք տեղեկանալ Ձեզ հետաքրքրող հարցի մասին:

Հավելեմ, որ մարզի բոլոր համայնքների ղեկավարների հեռախոսահամարները եւ կոնտակտայի այլ տվյալները կարող եք գտնել մարզպետարանի **aragatsotn.gov.am** պաշտոնական կայքի **Համայնքներ** բաժնի **Համայնքի ղեկավար եւ ավագանի** ենթաբաժնում:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Զորյան

13.04.20152.